

12.01.2021թ.

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ  
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ թիվ 437260/07\_Վ

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս, քննելով վարչական իրավախախտման 12.01.2021թ. վերաբերյալ թիվ 36025 արձանագրությունը, կից նյութերը,

**ՊԱՐՉԵՑԻ**

«ՍԻԳՈՒԼ» ՍՊԸ-ի տնօրեն Ալվարդ Գալստյանը (ՀՎՀՀ՝ 05205041, հասցե՝ գ. Քուչակ, 13փ, 1 ) օրենսդրությամբ սահմանված ժամկետում չի վճարել հարկերը, որի հետևանքով պարտավորությունները ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ըստ անձնական հաշվի քարտի տվյալների՝ 30.09.2020թ. կազմել է 1.841.855 ՀՀ դրամ, որից 1.391.144 ՀՀ դրամն առաջացել է 2020թ. օգոստոս ամսվա ԱԱՀ-ի և ակցիզային հարկի հաշվարկից, ինչի համար նախատեսված է վարչական պատասխանատվություն համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170<sup>3</sup> հոդվածի:

Վարչական վարույթի շրջանակներում կողմին փոստային ծառայության միջոցով ծանուցագիր է ուղարկվել վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը և գործի քննությանը մասնակցելու համար, սակայն Կողմի պատշաճ ծանուցված լինելու վերաբերյալ ապացույց չի ստացվել:

ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության կողմից 20.11.2020 թվականին կայացվել է վարչական վարույթը կասեցնելու մասին որոշում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի:

Կողմին հայտնաբերելու ուղղությամբ ձեռնարկվել են համապատասխան միջոցներ: Գործում առկա չեն, լրացուցիչ ապացույցներ, առարկություն կամ բացարտություն:

Այն փաստը, որ Կողմը վերջին մեկ տարվա ընթացքում կատարել է իրավախախտում (06.08.2020թ., թիվ 435949/07 որոշումը), սույն վարչական գործով դիտվում է որպես պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:

Նկատի ունենալով, որ ակտի հասցեատերը ի հայտ է եկել ղեկավարվելով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 34-րդ, 244<sup>2</sup>, 281 հոդվածներով և 282 հոդվածի 1-ին կետով՝

**ՈՐՈՇԵՑԻ**

1. Ալվարդ Գալստյանի վերաբերյալ հարուցված վարչական վարույթը վերսկսել
2. Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170<sup>3</sup> հոդվածի՝ Ալվարդ Գալստյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նշանակել տուգանք 20000 (քսան հազար) դրամի չափով:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ



Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ծանոթություն. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն Վարչական տույժ նշանակել վարչական իրավախախտում կատարած անձին՝ չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ (հոդված 40) Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումն ստանալուց հետո երեսուց օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավագործ մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

Խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում (հոդված 305, մաս 1) գանձապետական հետևյալ հաշվեհամարին. 900005240487՝ անդորրագրի <<եպատակ>> դաշտում պարտադիր նշելով որոշման համարը: Տուգանքը նշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանքը նշանակելու մասին որոշումը բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո 15 օրվա ընթացքում տուգանքը չվճարելու դեպքում այն ենթակա է բռնագանձման օրենսդրությամբ սահմանված կարգով: Մասնակցեցի գործի քննությանը, որոշման վերաբերյալ առարկություններ չունեն:

Ստացա որոշման ատմանը